

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԷՆ ՆԵՐՍ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ
Ի ՊԱՏԻՒ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ԿՆՔԱԽԱՅՐԵՐՈՒ ԵՒ ԲԱՐԵՐԱՐՆԵՐՈՒ ՏԻԿԻՆՆԵՐՈՒՆ

Առաջնորդ Սրբազան Հայրը գեղեցիկ գաղափարը յղացավ Առաջնորդարան հրաւիրելու Մայր Տաճարի Կնքահայրերուն եւ Բարերարներուն Տիկիները, որպէսզի անոնց ծանօթացնէր Մայր Տաճարի կառուցման աշխատանքերը:

Արդարեւ, ընդառաջելով Սրբազան Հօր հրաւերին, Մարտ 3ին Մայր Տաճարին Կնքահայրերուն եւ Բարերարներուն Տիկիները Արմէն եւ Կլորիա Համբար Դահլիճին մէջ ճաշով հիւրընկալուեցան Տիկին Ճին Պարսամի կողմէ:

Սեղաններուն օրհնութիւնը կատարեց Առաջնորդ Սրբազան Հայրը: Ընդունելութեան մասնակցեցան Գերշ. Տ. Վաչէ Արք. Յովսէփեան, Առաջնորդական Ընդհանուր Փոխանորդ՝ Հոգշ. Տ. Տաճատ Ծ. Վրդ. Եարտըմեան, Դոկտ. Արժ. Տ. Ջաւէն Աւագ Քհնյ. Արզումանեան, Արժ. Տ. Սիփան Աւագ Քհնյ. Մխսեան, Արժ. Տ. Յովսէփ Աւագ Քհնյ. Յակոբեան եւ Առաջնորդարանի Անձնակազմը:

Սրբազան Հայրը ջերմագին բարի գալուստ մաղթեց բոլորին, շնորհակալութիւն յայտնեց Տիկին Ճին Պարսամին, որ ազնուաբար կը հիւրընկալէր այս հաւաքը: Ապա մանրամասն տեղեկութիւններ տուաւ Առաջնորդանիստ Մայր Տաճարի կառուցման հեգասահ աշխատանքներուն մասին՝ անդրադառնալով Սեպտեմբեր 11ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռնամբ տեղի ունենալիք օծման արարողութեան, Կնքահայրերու եւ Բարերարներու հետ ընթրիքի, Սեպտեմբեր 12ին Հայրապետական Սուրբ Պատարագի, Պաշտօնական ճաշկերոյթի, բարձրաստիճան հիւր հոգեւորականներու մասնակցութեան ինչպէս նաեւ Միջ-Եկեղեցական յարաբերութեանց հոգեւորականներու եւ պետական հիւրերու ներկայութեան մասին: Տեղեկութիւններ տուաւ նաեւ Առաջնորդանիստ Մայր Տաճարի Խնամակալ Մարմնի մասին:

Տիկին Ճին Պարսամ իր սրտի խօսքը ուղղեց ներկաներուն: Իր երախտագիտութիւնը յայտնեց Առաջնորդ Սրբազան Հօր, որ տքնաջան աշխատանք կը կատարէր եւ իր լուրջ հետաքրքրութեամբ Առաջնորդանիստ Մայր Տաճարին կուռուցումը կը շարունակուէր բնականոն կերպով: Ուրախութեամբ յայտնեց, թէ բոլորն ալ անհամբեր կը սպասէին Ամենայն Հայոց Հայրապետի ժամանման եւ Մայր Տաճարի Օծման: Գնահատեց Սրբազան Հօր մտայղացումը՝ Կնքահայրերուն եւ Բարերարներուն Տիկիները հրաւիրելու այս ընդունելութեան:

Սրբազան Հայրը իր ուրախութիւնը յայտնեց, որ Տիկիներ սիրալիւր մթնոլորտի մէջ հաւաքուած էին: Շնորհակալութիւն յայտնեց անոնց կատարած նուիրատուութիւններուն համար եւ անդրադարձաւ նաեւ Կրտսեր Կնքահայրեր ունենալու ծրագրի մասին: Ուրախ եւ հաճելի մթնոլորտի մէջ Սրբազան Հօր հրաւերով Տիկին Ալիս Տօրեան սքանչելի կերպով արտասանեց Վահան Թէքէեանի գրած «*Հաշուէյարդար*» բանաստեղծութիւնը: Սրբազան Հօր հրաւերով, Մայր Տաճարի Հանգանակիչ Յանձնախումբի Ատենապետ՝ Տիար Անդրանիկ Զօրայեան իր սրտի խօսքը ուղղեց ներկաներուն եւ տեղեկութիւններ տուաւ կառուցման հետ առընչուած նիւթական կացութեան մասին, շնորհակալութիւն յայտնեց Կնքահայրերուն, Բարերարներուն եւ անոնց Տիկիներուն կողմէ կատարուած սրտաբուխ նուիրատուութիւններուն համար: Ինք եւս շեշտեց Կրտսեր Կնքահայրեր ունենալու կարեւորութիւնը: Ապա ներկայացուց Հանգանակիչ Յանձնախումբի անդամ՝ Տիկին Լենա Սիմոնեանը: Սրբազան Հօր հրաւերով իր ողջոյնի եւ գնահատութեան խօսքը ուղղեց Թեմական Խորհուրդի անդամ՝ Տիկին Լիլի Ռինկ Պալեան:

Սրբազան Հայրը տեղեկութիւններ տուաւ ապագայ հանդիւմներու եւ Մայր Տաճարի Օծման կապակցութեամբ ձեռնարկներու մանրամասն ժամանակացոյցը բոլորին դրկելու շուրջ: Ապա անգամ մը եւս իր երախտագիտութիւնը յայտնեց հիւրընկալ՝ Տիկին Ճին Պարսամին եւ անոր նուիրեց Հայաստանի մէջ պատրաստուած սրբապատկեր մը: Իսկ բոլորին բաժնել տուաւ Մեծ Պահքի մասին իր հեղինակած գիրքէն, ինչպէս նաեւ նոյնպէս Հայաստանի մէջ պատրաստուած փայտեայ խաչեր եւ Մայր Տաճարի կառուցման մասին DVD-ներ, որպէսզի աւելի մօտէն գաղափար կազմէին կառուցման ընթացքին մասին:

Սրբազան Հօր հրաւերով Արժ. Տ. Յովսէփ Աւագ Քհնյ. Յակոբեան ներկաները խանդավառեց աշուղական եւ հայրենասիրական երգերով: Փակման աղօթքը կատարեց Գերշ. Տ. Վաչէ Արք., ապա բոլորը միասին Սրբազան Հօր եւ իր կողմէ նշանակուած մի քանի հոգիներով շրջագայեցան Մայր Տաճարի համալիրին մէջ եւ ականատես եղան անոր ոճին եւ զանազան մասերուն: Բոլորն ալ իրենց երախտագիտութիւնը յայտնեցին Սրբազան Հօր՝ իր հրաւերին եւ իրենց ընծայուած այս գեղեցիկ առիթին համար:

